# ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳԻՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ ՍՏԱՑՈՂԻՆ՝ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂԻ ԱՐՏՈՆՎԱԾ ՉԼԻՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐԱԿԱԶՐԿՈՒՄ՝ 1-ԻՆ ԿԱՐԳԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ-ՀԵՏԱԳԱ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ [ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, ԲԱԺԻՆ 12305.81]

(ՀԱՄՅԵՍՏԵՐ)

Վարչաշրջան՝ ____________

Ծանուցման ամսաթիվը՝ ____________
Ծառայություն տրամադրողի անունը՝ ____________
Ստացողի անունը՝ ____________
Ստացողի գործի համարը՝ ____________
IHSS գրասենյակի հասցեն՝ ____________
____________

IHSS գրասենյակի հեռախոսահամարը՝ ____________

Ուղղված՝ Տնային աջակցության ծառայություններ (IHSS) տրամադրողին

Սույն ծանուցման ամսաթվից քսան (20) օր անց դուք այլևս իրավունք չունեք վճարում ստանալ IHSS ծրագրից՝ ձեր ներկայիս ստացողին կամ մեկ այլ անձնավորությանը ծառայություններ տրամադրելու համար: Եթե դուք արդեն սկսել եք ձեր ներկայիս ստացողին ծառայություններ տրամադրել, դուք կարող եք միայն վճարվել այն ծառայությունների համար, որ դուք տրամադրում եք ________________ միջոցով:

Ձեր՝ աշխատանքում նախնական ընդգրկվելուց հետո, շրջանը/Պեական իշխանության մարմինը,Շահույթ չհետապնդող միավորումը, ձեր քրեական անցյալի ստուգման միջոցով տեղեկացել է, որ դուք մեղադրվում եք այնպիսի հանցագործության (ների) մեջ, որի պատճառով իրավունք չունեք աշխատել որպես IHSS-ի ծառայություններ տրամադրող կամ ծառայությունների տրամադրման համար վարձատրություն ստանալ IHSS ծրագրի կողմից՝ համաձայն Բարեկեցության և հաստատությունների մասին Օրենսգրքի 12305.81 բաժնի: Հանցագործությունը (ները), որը ձեզ որկազարկել է, ներկայացված է ստորև.

____________________________________________
____________________________________________
____________________________________________
____________________________________________

Ստացողին նույնպես ծանուցում է ուղարկվել՝ տեղեկացնելով, որ դուք դատապարտվել եք հանցագործության համար, որի պատճառով իրավունք չունեք աշխատել որպես IHSS տրամադրող: Ստացողին օրենքով արգելվում է այս տեղեկատվության ցանկացած մաս որևէ անձի կամ հաստատության հայտնել:

Եթե դուք համաձայն չեք այս որոշման հետ, կից ձևաթղթում բացատրված է, թե ինչպես դուք կարող եք հայց ներկայացնել: Ձեր գրավոր հայցը պետք է ստացվի վաթսուն (60) օրացուցային օրվա ընթացքում՝ սույն ծանուցման ամսաթվից սկսած:

Եթե դուք գտնում եք, որ վարչաշրջանի/Պետական իշխանության մարմնի/Շահույթ չհետապնդող միավորման IHSS գրասենյակին տրամադրված տեղեկատվությունը ճշտգրիտ չէ, դուք պետք է կապվեք Կալիֆորնիայի արդարադատության դեպարտամենտի Արձանագրությունների վերանայման բաժանմունքի հետ՝ (916) 227-3849 հեռախոսահամարով կամ ____________________ Վարչաշրջանի Գերագույն դատարանի քարտուղարին՝ պարզելու տեղեկատվության աղբյուրը և ուղղելու դատարանի փաստաթղթերում պարունակվող տեղեկատվությունը կամ ձեր հանցագործության նախապատմության ստուգումը:

Եթե սույն ծանուցման վերաբերյալ հարցեր ունեք, կարող եք զանգահարել՝ ____________________: